Թ. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 24 ՄԱՐՏԻ 1906 — ԹԻՒ 815

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 7 «
Արտասահմանի համար տարեկան 15 ֆր.
վեցամսեայ 8 «
Ամերիկայի համար տարեկան 3 տոլ.
վեցամսեայ 1.50 «

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է։ Երեքին ապեր անգամներու համար 20 0/0 զեղչ կը տրուայ։

—o—

Վաճառքի համար ձեռքի 10 սանթիմ է

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Խմբագրութեան եւ գրամ ղրկել խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ
"Шаржумъ"
Варна

Redaction du journal
„Charjoum"
Varna (Bulgarie)

—o—

Պուլկարիոյ համար ձեռքի
15 ՍԱՆԹԻՄ
Արտասահմանի համար ձեռքի
20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք եւ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ԱՀԱ ԲԱՂԴԸ

Կը ծանուցանեմ յարգոյ հասարակութեան թէ՝ Սոֆիա քաղաքի Ս. վիճակահանութեան, Բ. կարգի ամենամեծ շահեստը ֆր. 20 000 ոսկի շահած է թիւ 32661 տոմսակը, ծախուած գլխաւոր գործակալութեանս ձեռքով, քաղաքիս մէջ. Այդ բաղդը վայելեց հայ օրիորդ մը։

Բաղդը կոյր է, չգիտցուիր թէ երբ կը ժպտի. ամէն պարագայի մէջ խելացիութիւն է բաղդը փորձել՝ այն ալ գլխաւոր գործակալութեանս հայթայթած տոմսերով, թէ ո՛վ չունի, լաւ է որ ձեռք տայ բաղդին։

ՍԱՐԳԻՍ ԴԱԲՐԻԷԼԵԱՆ
Գլխաւոր գործակալ Սոֆիա քաղաքի վիճակահանութեան, երաշխաւորեալ Իշխանական կտակարութեան

ԱՄՈ՞Թ Է...

—(o)—

Ավռամեանը Ամերիկայում մեռցել է մենակ. Նրա աղբարկն է ներկայանում վառնացի Ն. իս յայտնի Պոլսոյ մի խանում դռնապան և ապա Վառնայում ճաշարան պահող Վահագը, որ այժմ ամերիկեան մի շրջանի ներկայացուցիչ է և Ամերիկայում Վռամեան յեղ. դպրոցի գլխաւոր քարոզիչ—ուսուցիչներից մէկը... Վա՞յ քեզ հայ յեղ. տարրը, որ քո ուսուցիչները Վահագնեը պէտք է լինեն...»

Երբ «Շարժումի» թիւ 790ում այս տողերը կարդալու դժբախտութիւնն ունեցայ, անցեալի քաղցրիկ յուշիկները պահիկ մի եկան սփոփել սիրտս, որ ա՞յն չափ դառնութիւններով է բեռնաւորուած այժմ, հանդէպ այն քաոսին՝ որի մէջ, վտանգաւոր միքրոպների նման, յեղափոխական սրբազան անունն ու դրօշը շահագործող ապիկար ձրիակերների լեգէոններ է որ կը վխտան...

Մի լաւ տղայ էր Վահագը, ամօթխած, համեստ և իր կարողութեան չափով եռանդուն գործող։ Որքա՞ն էր ոգեւորուում նա, երբ «Հնչակի» կամ «Պատգամի» ծրարը ձեռքումս իր մօտ էի գընում. Նրան և իր խմբերին բաժին հանելու համար գրանցից, և կամ մը հաճելի, քայլը լուր իր ականջին փսփսալով՝ ոգեւորում և խանդավառում էի, և հրահանգում իր գործերի և անելիքի մէջ... Սիրում էի նրան, հայաստանցի (Բարձր Հայքից) այդ փոթուռ—չալվար հագնող հայրենասէրին։ Շատ անգամ և կարգահատէի վրան, երբ տեսնում էի որ իր կարողութեան իրաւասութիւնից վեր գործերի մէջ էր ուզում մտնել՝ փոքրիկ փառասիրութիւններ ի յայտ բերելով։ Ես աւելի նրա եռանդին և մանաւանդ իր կարողութիւնից բարձր լինելը չը կարենալ կըշռելուն էի տալիս այդ փոքրիկ ոտնձգութիւնները և ընկերաբար մեզմ յանդիմանում ու լռում...»

1895ի Բարբ—Ալիի յայտնի ցոյցի յաջորդ օրն իսկ, երբ հայ ժողովուրդը՝ անապահովութեան դէմ իբր բողոք՝ Պոլսի եկեղեցիները խռնվեց, մանաւանդ Կում Կափուի, Ղալաթիայի և Բերայի, Պոլսի Հնչ. Մ.ի գործադիր մարմինը իր վրայ վերցրեց դրանց կառավարելու հոգը։ Այդ տեղ էր, ահա՝, որ մի կարգ մարդիկ կամա—ակամայ ծանօթանալով գործադիրի կազմի հետ, և միւս կողմից նոր ընկերների պէտք տեսնելով, որոշեց մեր շրջանում ընդունել Սուինը՝ (Ս. Ս.) իբր լաւ շրջանի մի երիտասարդ, Վահէն (Ա. Ա.) իբրեւ մի համալսարանական մարդ—Նանսիի համալսարանից դուրս եկած, թէեւ նոր այն օրերը անդամակցեց հնչ. կուս.եան—որը կարող էր ապագային լաւ լինել.—որի քանութեան պտուղներն էլ բոլ բոլ վայելեցինք... և Վահագը՝ իբրեւ մի եռանդուն տղայ և շրջանի ծանօթ։

Այն օրից յետոյ դէպքերի, պատահարների վրայից տարիների մի երկա՞ր շարք է անցել որ ատեն պայմանները կարող են փոխած լինել մարդոց լաւ կամ վատ բնաւորութիւնները... ու այսօր, երբ նախկին այդ ընկերոջս անունին կը հանդիպիմ, ամերիկեան մի շրջանի ներկայացուցչի պաշտօնով—թէեւ դաշնակցական դրօշի տակ—կստիպւիմ մտածել թէ. ի՞նչ ստոր եսի տգեղ շահամոլութեան տէր կարող են լինել պատասխանատու այն պարոնները՝ որոնք այդ տեսակ լաւ, միամիտ բայց համեստ տղեկներ ընդարձակ ասպարէզի մէջ ձգելով՝ իբրեւ իրենց գործիք—արարածներ՝ կը գոռոզացնեն, կը փճացնեն, կանբարոյականացնեն... որոնք այդ պատճառով այն տեսակ մեծամտութեամբ կը բռնուին՝ որ հազիւ կը բարեհաճին՝ իրենց ոլիմպիական բարձրութենէն՝ ժողովրդին ու գործին վրայ քմծիծաղով ու ամենակատաղի աչքերով նայելու շնորհն անել ողորմածաբար...

Այդ տեսակ գոռոզ, փճացած, անկարող բայց յամառօրէն իր վրայ հաւատք ունեցող մի ողորմելի տիպի պատահեցի վերջերս Սալմաստում։ Պարոնը՝ որ բոլորովին անգրագէտ, անուս և տգետ մէկն է, բայց հայաստանցի լինելու առաւելութիւնն ունի. իր երկրում հօտաղութիւն անելուց յետոյ, գնում է Պոլիս, որ տեղ մաքսաճի—բեռնակիր է լինում՝ իրեն պէս հազարաւորների նման մտնելով այն ատենի հնչակեան ստւար շարքերում, իբրեւ պարզ անդամ։

Այժմ պատահում եմ նրան, ի՞նչ էք կարծում իբրեւ հասարակ զինուո՞ր, գործի՞չ—երբէ՞ք, այլ... իբրեւ հնչ. կուսակցութեան ներկայացուցիչ՝ իր ամբողջ անուս, անգրագէտ ու անկարող հանգամանքը շալակին...

Եթէ այդ պարոնը իր զանազան շահերի համար ընդունել է այդ տեսակ մի ծանր, պատասխանատու պաշտօնի նոյն իսկ անունը՝ որի նպատակն ու նշանակութիւնը հասկնալու չափ կարողութիւն անգամ չունի—արդեօք խղճի խայթ ու ամօթի նշոյլ չունի՞ն այն պատասխանատու պլեխանովիստ պարոնները՝ որոնք այդ խեղճի կարողութեան շատ լաւ ծանօթ լինելով մէկտեղ՝ իրանից շատ բարձր գիրքի մէջ են դրել, որի պտուղները վայելում են... Ամո՞թ է, պ. պ. պատասխանատուներ, հնչակեան լինէք թէ դաշնակցական։ Ձեր եսի, ձեր շահի համար յեղ Ս. Գործը լարախաղացութեան ասպարէզ մի՝ չինէք...

Գիտէ՞ք արդեօք ձեր արածների ծանրութիւնը, որով սպանում էք գործ և փճացնում մի համեստ երիտասարդութիւն, որը ի հարկին կարող էր օգտակար լինել, եթէ իր աստիճանում տրէր... Զգո՞ւմ էք, պ. պ. պատասխանատուներ, ձեր ոճրի ծանրութիւնը... Զգաստացէ՛ք, պարոններ, ամո՞թ է, շա՞տ ամօթ...

ԿՐԱԿՈՏ

ՓԱՍՏԵՐԸ ԹՈՂ ԽՕՍԻՆ

—o—

Շնորհիւ Վ.Հ. Սուլթանի ահեղայնութեան՝ ոչ ոք որոշութիւն կը տիրէ...

— —

94—96-ի կարմիր օրերում, մի կողմից տաճիկ կառավարութիւնը հայ ժողովրդի անմեղ արիւնն էր հոսեցնում եւ ամբողջ գիւղեր, գաւառներ հրդեհում, աւերում, միւս կողմից նոյն կառավարութեան ագենտներ՝ Աշգեան եւ նման տխրահռչակ հոգեւորականներ՝ ժողովրդին բռնի կերպով ուղերձներ էին ստորագրել տալիս, իբրեւ կարմիր Սուլթանին մատուցանելու, որ իբր թէ գոհ են Սուլթանից ու նրա կառավարութիւնից։ Այդ ուղերձներում Սուլթանի կենաց համար բարեմաղթութիւններ եւ արեւշատութիւն մաղթելով հանդերձ՝ գրում են—«Նորին Վեհ. Սուլթանի

ամենայն տեղ անդորրութիւն կը տիրէ» եւայլն..,

Ճիշտ այդ տխուր դերն է վերցրել մեր Ագուլիսի հասարակութեան մի յայտնի որոշ մասը...

„Կայծ" թիւ 4-ում մենք գրել է ինք թուցիկ կերպով Ագուլիսի Գրութեան եւ Հ. Յ. Դաշնակցութեան ունեցած ընթացքի մասին։ «Ցառաջ» մէջ թիւ 70, պարոն Դաշնակցականը հայհոյանքներով իբր թէ հերքեց եւ զրպարտութիւն համարեց մեր նամակը։ Այդ դեռ ոչինչ։ Մի քանի օր սրանից առաջ՝ «ապրիլի 20-ին 4 ժամ 42 րոպէին» հեռագիրը հաղորդեց Ագուլիսից, որ «չնորհիւ վեհ. Սուլթանի ամենայն տեղ անդորրութիւն կը տիրէ»... Գոնէ այդ տպաւորութիւնը զգացինք մեզ վրայ, կարդալով «Ցառաջ»-ում թիւ 76 ժրաջան Ագուլիսի „Լիազօր" պարոն Անդրէաս Տէր-Գէորգեանի հեռագիրը եւ «Ալիք»-ում թիւ 3, 70 ստորագրութեամբ հերքումը։ Դա հերքում չէր այլ աշըղի «նեյնիմներ»...

Մեզ երբէք չզարմացրեց այդ ստորացուցիչ հեռագիրը եւ 70 ստորագրութեամբ հերքումը. մենք սպասում էինք Ագուլիսի յայտնի մասից, այդպիսի ստորացուցիչ հեռագրերի ու բողոքագրերի։

Ստել. զրպարտութիւն համարել օրը ցերեկով կատարուած դէպքերը, այդ միայն որոշ կարգի մարդկանց է վայել... Մենք, հակառակ մեր ցանկութեան, ստիպուած ենք մեր ձեռքի տակ եղած փաստերի մի չնչին մասը միայն, հրապարակ հանել եւ պատռել ազգի թշուառութիւնից եւ նրա ինքնապաշտպանութիւնից ճառող Հ. Յ. Դաշնակցութեան դիմակը, որպէսզի հասարակութիւնը լաւ ճանաչէ իր սրտացաւ բարեկամին։

Մեծուղների ցուցակը վերջին տասը ամսւայ ընթացքում.

1) Ն. Մ.*) 60 տարեկան հարուստ վաճառական, փողոցով անցնելիս սարճանակից վիրաւորուած՝ փող չտալու համար։ 2) Փ. Փ., 65 տարեկան հիւանդոտ ծերունի։ իր տան մէջ ծեծուած իր ձեռքի չեչոտ հաստ ձեռնափայտով, որից վէրքեր ստանալով երկու ամսի չափ անկողնում պառկեց՝ թուրք ծառայ ունենալու համար։ 3) Մ. Ա., 40 տ. հարուստ։ 4) Ս. Ռ, ընդդիմադրութեան համար. 5) Ա. Փ. վաճառական, ընդդիմադրութեան համար. 6) Մ. Ն., 60 տարեկան հարուստ գործարանատէր, հրաւիրելով մէկի տանը, իբր թէ կարեւոր գործի համար. 7) Պ. Ֆ., 40 տ. դեղագործ. 8) Յ. Գ., 60 տ. հարուստ վաճառական 9) Ց. Հ. 50 տ. հարուստ վաճառական, ճշմարտախօսութեան համար։ 10) Մ. Վ., 70 տ. արհեստաւոր, թուրքից միս գնելու համար. (այստեղ պէտք է յիշել, որ վերջին ժամանակներս թուրքերի դէմ բոյկոտ են հրատարակել սակայն «օրէնքը» բացառութիւն է կազմում մի քանիսի վերաբերմամբ) 11) Գ. Մ. 60 տ. հարուստ, փող չտալու համար։ 12) Ա. ոսքել Սիմոնեանց սերմահան (այժմ վախճանուած) 13) Լեւոն Գէորգեանց երկու անգամ, ընդդիմադրութեան համար (այժմ վախճանուած) 14) Յ. Մ.— Ա. ուսուցիչ, փողոցում աշակերտների ներկայութեամբ՝ բողոքելու համար. 15) Զ. Ն. -Զ., բողոքելու համար։ 16) Հայ կաղմ. պատկանող ուսուցիչ փողոցում ամենախայտառակ կերպով ծեծուած սոցիալիստական մտքեր տարածելու համար։

Ուրիշ կուսակցութեան պատկանող անձինք, որոնք դատապարտուած են եղել ծեծի, բայց մի խումբ մարդկանց ցոյց տուած ընդդիմադրութեան չնորհիւ չի յաջողել 1) Գ. Մ., ուսուցիչ՝ հայ կաղմ. պատկանող, բողոքելու եւ սոցիալիստական մտքեր տարածելու համար. 2) Դ. գիւղի ուսուցիչ, սոցիալիստական մտքեր տարածելու համար. 3) Մ. Ս. 4) Յ. Ն.— Կ.—Նոյն իսկ սպանութեան փորձ։

Պանդխտութեան գնացողների խընդիր։ Շուտով կը լրանայ մի տարին ինչ որ վճռեցին թէ Ագուլիսից եւ թէ շրջակայ գիւղերից, չթողնել գաղթելու կամ պանդխտութեան գընալու։ Արգելում են դուրս գնալ թէ անհրաժեշտ գործ ունեցողներին եւ թէ չունեցողներին։ Կան ընտանիքներ, որոնց տղամարդիկ օտարութեան մէջ են եւ հանգամանքներից ստիպուած չեն կարողանում գալ եւ իրանց ընտանիքը տանել. իսկ եթէ գալիս էլ են, չեն թողնում վերադառնալ. ուստի երբեմն ստիպուած են լինում ընտանիքը ծանօթի կամ բարեկամի միջոցով տանել, սակայն իսկոյն արգելք են լինում եւ երկար բանակցութիւնից յետոյ, ըստ իրանց հայեցողութեան առաջարկում են 100—1000 ր. վճարել, ապա գնալ։ Այստեղ պիտի յիշենք որ գնացողներից որոշ գումար են առնում եւ կամ ստորագրութիւն։ 15 օրով կամ մի ամսով թոյլտուութիւն խնդրողներից, որ եթէ որոշուած ժամանակից մի քանի օր անցնելու լինի, այն ժամանակ վկայականի մէջ գրած գումարը եւ կամ որոշ տուգանք պարտաւոր են վճարել։ Միջոց ունեցողները վճարում են. իսկ չունեցողները մնում են. բացառութիւններ երբեմն լինում են։ Շատերը անկարող լինելով գիմանալու այդ ծանր պայմաններին փորձում են ծածուկ հեռանալ. գրանց էլ որոշ կէտերից՝ ներքին Ագուլիսից, Աղայից, Զուլֆայից եւ Նախիջեւանից յետ են դարձնում։ Այդ կէտերում գտնուող Դաշնակցութեան ագենտները նրանցից պահանջում են, որ ցոյց տան Դաշնակցութեան տուած պասպորտը, բաց են թողնում, իսկ եթէ ոչ՝ այն ժամանակ ճանապարհորդները նախիջեւանում ստիպուած են լինում օրերով մնալ եւ հեռագրներով բանակցութեան մէջ մտնել, նրանց յաջողւում է թոյլտուութիւն ստանալ շարունակելու ճանապարհը եւ կամ կըրկին յետ դառնալ գիւղ. չպիտի մոռանանք ասելու, որ այդ օրէնքն էլ մի քանիսների վերաբերմամբ բացառութիւն է կազմում։

Ուրիշ կուսակցութեան պատկանող անձերին պաշտօնից ու եկամուտներից զրկելու փորձ Անցեալ տարի յունվարին, Ծ. գիւղի ուսուցիչ Շ ին որը ընտանիքի եւ երեխաների ամբ է, ուսումնարանի տեսուչը Ս. դաշնակցութեան պատկանող մի շարք հալածանքների է ենթարկում, յանդիմանութիւններ եւ սպառնալիքներ է անում, որ եթէ չհրաժարուի իր դաւանած սկզբունքից, անմիջապէս վռնդել ուսումնարանից Ուսուցիչը մելժում է այդ առաջարկը որպէս եւ պաշտօնը. ասելով որ, լաւ կը համարեմ քաղցած մեռնել, քան բռնի կերպով իր համոզմունքից զատուել եւ հրաժարական տալով հոգաբարձութեան. պատրաստւում է հեռանալ։ Սակայն ժողովուրդը միջամտելով թոյլ չէ տալիս ուսուցչին հեռանալ. իսկ տեսչին էլ ստիպում են հրապարակաւ ներողութիւն խնդրել։

Ռ. գիւղի քահանային, գիւղի մի քանի ազդեցիկ մարդիկ Դաշ. պատկանող. ստիպում են հրաժարուել իր դաւանած սկզբունքից, սպառնալով որ հակառակ դէպքում եթէ կարգ կատարելու համար մինչեւ այժմ տալիս էին հինգ ռուբլի. յետ այսուկրտան հինգ կոպ. եւ կը ստիպեն ժողովրդին նոյնպէս վարուելու։

Ուրիշ կուսակցութեան ամբողջապէս պատկանող կամ խառն գիւղերում օրինակ Ց., Փ., Ռ. Ա., Ն. եւ այլն, բռնի կերպով առաջարկում են Դաշնակցական դառնալ. հակառակ դէպքում նրանց սպառում է ծեծն ու տեռորը. բոլորը անխտիր պիտի ճանաչեն եւ պատկանեն Հ. Յ. Դաշնակցութեան. նա է ժողովրդի «միակ եւ իսկական պաշտպանը»..

Ց. գիւղում մի ընտանիք իր տունը գնում է ուրիշ կուսակցութեան պատկանող անձանց տրամադրութեան տակ ժողովի համար, հետեւեալ օրը, Դաշնակցականներից գնում են սպառնալիքներ տալիս, ահ ու սարսափի մէջ ձգում եւ որպէս բարեկամի խորհուրդ են տալիս, այլեւս այդպիսի վտանգաւոր քայլ չանել. ասելով որ կարող է մատուել եւ հետեւանքը վատ կը լինի եւայլն. նոյնանման դէպք պատահում է եւ Դ. գիւղում,

Տալով սոյն փաստերը, եզրակացութիւն անել թողնում ենք ընթերցողներին...

ԿԱՑԾ»

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Քէօսթէնճէ, 16 մայիս 19 6

Շատ կը փափաքէի ամէն ինչ ժամանակին գրել, սակայն անձնական գործերու պատճառաւ յաճախ քաղաքէս բացակայել ստիպուած ըլլալով՝ հազիւ ստիպ կուենամ յաջորդական թղթակցութիւններով պատկերացնել կարգ մը խնդիրներ որոնք տեղի ունեցան մեր մէջ։ Յուզուելն հոս եւ որոնց մասին երկար լուր մնալը՝ արդէն իսկ իր վնասները տուաւ, ցորչափ՝ մանաւանդ՝ մութի մէջ գործողները մերկապարանոց ըլլալու երկիւղէն ազատ զգացին զիրենք։

Կարծենք՝ յարգելի ընթերցողները, մեր՝ ամիսներ առաջ «Շարժումի մէջ քանիցս գրածներէն գիտեն թէ, 6—7 ամիսներէ ասդին՝ քաղաքիս մէջ կազմուեցաւ «երգեցիկ-թատերասիրաց» ընկերութիւն մը տասնեակ մը կարող եւ ազնիւ երիտասարդներու նախաձեռնութեամբ. արդէն քիչ անցած իր գոյութեան փայլուն ապացոյցն ալ տուաւ այդ ընկերութիւն մասնաւորապէս թատերական բեմին վրայ չնորհիւ տեղւոյս երկու ուսուցիչներու անվիճելի կարողութեան եւ փութաջանութեան

ՀԷՆՐԻ ՏԸ ՔԼԱՅՍ

ԸՆԿԵՑԻԿԸ

Էլվիրի հոգւոյն մէջ դէպի տխրութիւն թագուն հակում մը կար. որ վրան մնացած էր մանկութեան ատեն պատահած յուզիչ դէպքէ մը։

Իր հայրը Ֆիլիփ Փարքէ, ձենովացի հարուստ ներկարար մը. իր արհեստին պահանջմամբ ծովեզերքը կը բնակէր։ Իր տունը կը կոթնէր, կոփածոյ քարէ չինուած թուփի մը։ Տանիքին վրայ խոշոր գերաններ զետեղած էին ուրկէ կը կախուէին ներկուած կերպասները որոնք ծովուն վերեւը, տանիքէն դուրս կը ծածանէին բաւական լայնօրէն։ Դժբաղդ գիշեր մը տունը կրակ առաւ, և կարծես ծծումբէ ու ձիւթէ չինուածի պէս, ամբողջ սենեակները սկսան ճաճասելով վառել։ Ամէն կողմէ բարձրացող բոցերէն զարհուրած, Էլվիր դեռ 13 տարեկան այն տեսն, սանդուխէ սանդուխ փախչելով, ինքզինքը գտաւ տանիքին գերաններէն մէկուն վրայ, առանց ինքն ալ գիտնալու թէ ի՞նչպէս։ Խեղճ փոքրիկը, երկնքին ու երկրին մէջ առկախ, չէր գիտեր թէ ի՞նչ կերպով փախչէր։ Իր ետին տանիքը բոցերու մէջ կը վառէր և արդէն կրակը գերանին հասած է, իսկ ստորև՝ ընդարձակ, ամայի, զարհուրելի ծովը։ Երբ, ինքզինքը սուրբերուն յանձնելով և երկու չայեաց փոքրագոյնը ընտրելով կը պատրաստուէր ծովը նետուիլ երիտասարդ ձենովացի մը պատրիկեաններու ցեղէն, իր դէմ ելաւ, վերարկուն վրայէն նետեց, աղջիկը բռնեց և ճարպիկութեամբ ու քաջութեամբ կախուելով գերանին կախուած կտաւներէն մէկուն, ինքզինքը աղջկան հետ ծովը ձգեց։ Ոտովին մէջ գտնուող կօնտօլները զանոնք իրենց մէջ առին և եղերք փոխադրեցին, ամբոխին ծափահարութիւններով ողջունուելով։ Բայց այնպէս պատահեցաւ որ, երիտասարդ հերոսը տունին մօտէն անցնելու ատեն, տանիքէն ինկած կղմինտրէ մը դլուխը վիրաւորեց։ Վէրքը բաւական մեծ ըլլալով, խեղճը նուազած գետին փռուեցաւ։ Իր հօրը Մարքիզին պալատը տարին զայն, և երկար ատեն պէտք եղաւ առողջանալու համար։ Իտալիոյ ամէն կողմերէն բժիշկներ բերել տուին, որոնք գաւն բաւական չարչրկեցին և ուղեղէն հարիւր օսկոր հանեցին, ինչպէս կըսեն. բայց բոլոր իրենց արուեստը պպարդիւն անցաւ, երկնային անրացատրելի կամքի մը զօրութեամբ։ Երբեմն միայն, հիւանդը քանի մը քայլ կրնար առնել Էլվիրի բազուկին յենած զոր Մարքիզուհին կանչած էր իր զաւակը խնամելու համար։ Վերջապէս, երեք ամսուան սոսկալիօրէն տաժանելի հիւանդութենէ մը ետքը, որուն միջոցին դեռատի Էլվիրը երբէք չէր հեռացած հիւանդէն, վերջին անգամ մը անոր ձեռքը սեղմեց և հոգին աւանդեց։

Փիաչի, որ այս դժբաղդ երիտասարդին ծնողացը հետ առևտրական յարաբերութիւններ ունէր. Էլվիրի ծանօթացած էր հիւանդը խնամած միջոցին։

Զայն սիրեց ու ամուսնացաւ հետը։ Խնամքով կը զգուշանար հանգուցեալին անունը տալու անոր առջեւ և կամ ոևէ կերպով անոր մէկ յիշատակը զարթուցանելու, որովհետեւ գիտեր որ, անցեալին ամենափոքրիկ մէկ ակնարկութիւնը իր կնոջ գեղեցիկ և զգայուն սիրտը պիտի յուզէր։ Այն ամէնը որ, նոյն իսկ հեռ.

Սակայն դժբախտաբար, մեր մէջ լաւ ձեռնարկներու գնահատումը շատ կասկածելի ըլլալով, շուտով ստորաքարշ եւ լորձնուտ տիպարները իրենց խարդաւանքները կը սարքեն ամէն ինչ վերիվայր շրջելու։ Ցաւալի է այս հնօրեայ երեւոյթը բայց միանգամայն տխուր իրականութիւն։

Ինչպէս յայտնի է, զգայամոլ գաղղիացին երբ կնճռոտ կամ մութ խնդրոյ մը առջեւ գտնուի, անոր մէջ անմիջապէս "կնոջ մատ» ըլլալը կենթադրէ. իսկ հայերս, գուցէ կըրօնական ազգի ճակատագրական անունը կրած ատենիս, երբ դաւերու, երկպառակութեան հանդիպինք, պէտք է հաստատապէս հաւատանք թէ այդ տեսակ անշնորհութեանց տակ անպատճառ «կղերականի մը» սեւամաղձ սիրան եւ ստրկական հոգին ծածկուած կը գործէ։

Այսպէս, Քէօսթէնճէի հայութիւնն ալ, որ բաղդատաբար խաղաղ ու օգտակար կեանք մը կը շարունակէր ունենալ ազգային գործերու մէջ, սա վերջին ամիսներու մէջ սակայն՝ սկսաւ խռովել քաղաքիս քահանային անշնորհք արարքներուն երեսէն։ Շուտով հասկցուեցաւ թէ–գոնէ քիչ մը ատեն իր գործին տէրը կարծուած այդ մարդը— պարզապէս կեղծապարիշտ, անգոյն եւ աննկարագիր արարած մըն է։ Թէ ինչ ինչ փծուն նկատումներէ թելադրեալ՝ «Երգեցիկ Թատերասիրաց» ընկերութիւնը՝ զէթ առժամապէս՝ անգործութեան դատապարտեց. Թաղականութեան եւ այդ մարմինին մէջ յարաբերութիւնները լարեց, ջանաց դասատուները անուանարկել, եւ վերջապէս իր դէմ եղած զզուանքը ծայր աստիճանին հասցուցած ըլլալով ժողովրդեան մէկ սրտուար դասակարգն ստիպուեցաւ հանրագրութիւն մը պատրաստել, որուն մէջի սա հետեւեալ կէտերը բաւական են՝ պերճախօսօրէն՝ այդ մարդուն արատաւոր իսկութիւնը ցոլացնելու։ Ահաւասիկ բառ առ բառ։ «Մեր քահանան բնաւ իր կոչումին չը համապատասխաներ»։

«ա. Վասնզի հոյակապ տգէտ մըն է։

բ. Վասնզի պարզապէս քանի մը ազգաւէաս աղաներու քմահաճոյքին ղերին է։

գ. Իր միակ զբաղումն է բազոսի պաշտամունքը, անլուր արծաթամոլութիւնը եւ անորակելի ծուլութիւնը։

դ. Ժողովրդեան հոգեւոր պէտքերուն հանդէպ՝ ապիկար անտարբերմը եւ կիրակի օրերէն զատ բնաւ եկեղեցին չը բացող անպարտաճանաչմը։

ե. Հազարաւոր գործաւոր դասակարգին—որ եկեղեցին եւ դպրոցը նիւթապէս կը պահէ—բնաւ հոգ չը տանիր. տարին երկու անգամ կայցելէ անոնց եւ այն ալ Ծնունդ—Զատիկ դրամ հաւաքելու համար։

զ. Ո եւ է կրթական, կրօնական, ազգային եւ հասարակային յառաջադէմ գաղափարի մոլեռանդ եւ ի հարկին մատնտու հակառակորդ մը, խաւարի խաչակիր մը։

Սոֆիա, Բազարճըգ եւ Ռուսճուք ըրած եւ պատրիարքարանիդ արդէն ծանօթ չահատակութեանց տէր քահանան է։

է. Ի մի բան, իր ՀԱՍԱԿԱՐ գոյութեամբը տեղւոյս ազգայիններու համար անտանելի չարիք մըն է։»

Ահա այս վերի մեղադրանքներով հանրագրութիւնն է որ, որչափ սուր նախաբանով, այնչափ ալ ազդու վերջաբանով կը պատանէ պատրիարքարանէն այդ քահանային անմիջական հեռացումը. հակառակ պարագային ուրիշ մը բերելու պընդումով։

Վերջին վայրկեանին զարմանքով կը լսենք թէ, այդ քահանան վերահաս վանդն զգալով երդմնալից խոստումներ ըրած է, իր սերմանած չարիքներուն առչեն առնել եւ կարելի եղածին չափ երիտասարդութեան հաճելի ըլլալ։ Կը տարակուսի՞նք այդ բանին վրայ։ Հաստատապէս կիմանանք նաեւ որ, երկու դասատուները իրենց ծովորական վեհանձնութեամբ ժամանակի մը համար յետաձգել տուած են պատրաստուած հանրագրութեան առաքումը։ Այլեա՞փ ալ ազնուամտութիւն. երբ այդ քահանան դասատուներուն հորը կը փորէ, անոնք կը համբերեն. Սակայն միւս կողմէն վստահ եմ թէ, դասատուներն ալ Ֆէսլեան քահանայի խոստումներու ելքին կըսպասեն, որպէս զի ի հարկին իրենց մահացու հարուածը հասցնեն անոր։ Պիտի գրեմ։

Քէօսթէնճէցի

Ց. Դ.—Թէեւ վերի գրութեանս նիւթէն դուրս, բայց ընդհանուր շահեկանութիւն ունեցած ըլլալուն համար. հոս դիտել կուտանք թէ՝ Պուլկարիոյ մէջ տեղի ունենալիք ուսուցչական ժողովին՝ ինչո՞ւ չեն հրաւիրուած քաղաքիս երկու ուսուցիչները՝ պր. պր. Սեթեան եւ Պետիկեան, որոնք ձեռնհասօրէն կրթական օգտակար ըլլալ այդ ժողովին առնելիք որոշումներուն մէջ, քանի որ ուսուցչական կարողութեան տեսակէտով իրենց հաւասարող Պուլկարիոյ մէջ ալ քիչեր կը գտնուին։ Այս հարցումի մասին խմբագրութեան ալ մէկ բարեացակամ բացատրութեան կըսպասենք(*)։

Նոյն

(*) Ցարգելի յօդուածագրին կը պատասխանենք թէ՝ Քէօսթէնճէի ուսուցիչներուն հրաւէր չի խրկուիլը լոկ նախաձեռնարկներուն ձախող մէկ մոռացման արդիւնք կրնայ ըլլալ, եթէ ոչ անձնական չարժառիթի մը, որովհետեւ առ հասարակ մեր մէջ յուզուող խնդիրները միշտ անձնականութեանց քիչ կամ շատ տեղ տուած են ու կուտան։ Այսու հանդերձ, ինչո՞ւ ուղղակի անոնց չեն գիմեր ձեր ուսուցիչները. բացատրութիւն պահանջելու։

Յ. Խ.

ՊՈՒԼԿԱՐԱՀԱՅ ՈՒՍՈՒՑՉԱՑ

ՄԻՈՒԹԻՒՆԸ

Մեր ազգային ուսուցչաց «Միութեան» հարցը, զոր Ռուսճուքի Ուսուցչական Պատ. Մարմինը նախաձեռնութիւնն ունեցաւ այս անգամ հրապարակ հանելու, եթէ ո՛չ գործնականի մէջ, գէ՛թ տեսականապէս՝ բաւական հին, և խիստ սրտի մօտ խնդիր մը ըլլալուն, կարծեմ աւելորդ չի նկատուիր որ այդ մասին ես ալ իմ զգացած ուրախութեանս հետ, սրտէս բղխած մէկ քանի թելադրանքն ընեմ։

Թէ որքա՞ն բարերար արդիւնք արտադրելու ընդունակ է պուլկարահայ ուսուցչաց ընդհանուր «միութեան» և մշտատև համերաշխութեան կապը. ինչպէս և՝ բոլոր պուլկարահայ վարժարաններու մէջ միօրինակ, նպատակայարմար և կանոնաւոր ծրագրի մը գործադրութիւնը, իրենց կոչման և ստանձնած մեծ գործին քի՛չ շա՛տ չըսենք կատարելապէս գիտակցութիւն և յարմարութիւն ունեցող կրթական ժիր մշակներու ձեռքով. ասիկա անժխտելի և միանգամայն անհրաժեշտ իրողութիւն մըն է։

Տասնեակ տարիներէ հետէ, այս մասին շատ բան խօսուած ու գրուած է. այժմ քանի որ այդ հարցը փոքր ինչ ուղիղ գծի վրայ դրուած կերեւի, ես բոլոր հոգւոյս կը տենչամ որ, Ուսուցչական ընդհ. մարմինը, գէթ այս անգամ, առանց սայթաքելու, կարող լինէր յառաջ տանելու այս պիտանի գործը։

Սրտով ուրախ ենք, տեսնելով որ, պուլկարահայ յարգելի ուսուցիչները՝ վերջապէս ժամանակը հասած նկատելով, անկեղծ խանդով մը այդ կարեւոր հարցով կը զբաղին, և իրենց անդրանիկ համագումարը կազմելու ջանքեր կը թափեն։ Մենք անպատեհ չենք սեպեր այս առթիւ ալ բնականօրէն մեր զգացած միամիտ թելադրութիւններն ընել, քանի որ, արդէն ա՛յդ Միութեան կանոնագիրն ա՛լ կազմուելու ճամբուն մէջ է...

Անշուշտ մեր յարգելի բարոյական մշակները՝ շատ աղէկ գիտեն որ, ազգի մը գոյութեան անսասան հիմնաքարերն են կրօնք, լեզու և ազգային ուրոյն բարոյականը։ Անոնք ամէնքն ալ մեզմէ շատ լաւ գիտեն, և պատմութիւնն ալ բացայայտ կերպով կը ցուցնէ որ, նախկին ժամանակները և վերջին դարերու մէջ, ա՛ն ազգերը, որոնք ժամանակի անխուսափելի հարկին ու իրենց ազգային ոգւոյն համաձայն գիտցան առաջ մղելու զօրացնել իրենց ազգային գոյութեան վերոյիշեալ ամենազօրեղ ազդակները, անոնք, այսօր ազգաց շարքին մէջ, ամենափայլուն տեղը կը բռնեն։ Իսկ

ուէն հեռու Էլվիրի կը յիշեցնէր իր երիտասարդ աղուտրարին տառապանքի օրերը, անոր մահը իր փրկութեան պատճառաւ, արցունքներ կը խլէր իրմէ, ու այլ եւս ոչ մի թարութիւն եւ ոչ հանգիստ կրնար գտնել։ Ուր որ գտնուէր, կը մեկուսանար, ու ոչ ոք կը համարձակէր անոր հետեւիլ, որովհետեւ ամէն ոք գիտէր թէ, այդ պարագային պէտք էր զայն թողուլ հանդարտ ու միայնակ իր յուսահատութիւնը ողբալու։ Ոչ ոք, բացի Փիաչիէն, չէր գիտեր այս եւական ու խորունկ ցնցումներուն պատճառը, որովհետեւ երբէք, իր կեանքին մէջ, իրեն պատահածին վրայ բառ մը իսկ չէր ելած բերնէն Սոֆիոյ հառաջակ այս յուզումները ջլային դրութեան սարսաղման մէկ գրգռականութիւնը կը վերագրէին, որուն հետեւանքով բուռն ջերմ մը անցուցած էր, ամուսնութենէն քիչ ետքը այս դէպքը ամէն բան կը բացատրէր և ուրիշ ոչ է կասկածի կամ ենթադրութեան տեղի չէր տար։

Օր մը Նիքոլօ, որ հակառակ իր հօր արգելքներուն Քսավիէռա Թարթինիի հետ իր յարաբերութիւնները չէր դադրեցուցած, զայն բարեկենդանի հանդէսի մը տարաւ։ Գործը գաղանի կըլլար իր կնոջմէն, որուն պատրուակած էր թէ բարեկամի մը տունը հրաւիրուած է։ Ճենովացի ասպետի մը զգեստով վերադարձաւ տուն գիշերուան շատ ուշ մէկ ժամուն, երբ արդէն բոլորը խոր քունի մէջ էին։ Մերուենի Բիաչի ճիշտ նոյն գիշերը անակնկալ անհանգստութենէ մը բռնուած էր եւ Էլվիր ստիպուած էր խնամել զայն, ի չգոյէ ազախինի։ Երբ քացախի շիշ մը փնտռելու ելած՝ դարակ մը կը բանար աթոռի մը վրայ կանգնած եւ ձեռքերով շիշերու և սրուակներու մէջ կը պրպտէր, Նիքոլօ դուռը կամացուկ մը բացաւ եւ ճրագ մը ձեռքը՝ սրահէն անցնելով գնաց, փետրազարդ գլխարկով, կարճ վերարկուով եւ քովէն սուր մը կախուած։ Միամտօրէն, առանց Էլվիրը տեսած ըլլալու իր ննջասենեկին կողմը գացած էր եւ սարսափած էր դուռը գոց գտնելով, երբ միեւնոյն պահուն Էլվիր անոր երեւումէն չանթահարուած, ձեռքի շիշերով ու սրուակներով գետինը փռուեցաւ նուազուն։ Նիքոլօ սարսափէն դեղնած, ետին դարձաւ եւ պատրաստուեցաւ դժբաղդ կնոջ օգնութեան փութալ, բայց ելած աղմուկէն անշուշտ Փիաչի ալ պիտի կասկածէր։ Ցանդիմանութիւն մը լսելու հոգը միւս բոլոր նկատումներուն յաղթեց խելայեղ աճապարանքով մը Էլվիրէն խլեց բանալիներու տրցակ մը զոր մէջքէն կը կապէր եւ երբ իրեն պէտք եղած բանալին գտաւ, տրցակը նետեց ու աներեւոյթ եղաւ։ Փիչ ետքը Փիաչի, թէեւ սաստիկ հիւանդ, անկողնէն վար ցատկելով՝ գնաց սրթնցուց կինը, սպասուհիներն ու սպասաւորները որոնք ամէնքն ալ վազելով եկան, ձեռքերնին մէյմէկ ճրագով։ Նիքոլօն ալ իր կարգին ներկայացաւ, գիշերազգեստով, հարցնելու թէ ի՞նչ էր պատահած։ Էլվիր, որուն լեզուն սարսափէն կարծրացած էր, չի կրցաւ խօսելու. բայց ի՛նքը միայն կրնար այդ հարցումին պատասխանը տալ։ Հետեւաբար իրողութեան հանգոյցը անլուծելի մնաց, երկնային դաղտնիքի մը մէջ պարուրուած։ Թշուառ կինը, որ իր բոլոր անդամներով կը դողար, անկողնի փոխադրուեցաւ, ուր բազմաթիւ օրեր սաստիկ տենդէ մը տառապեցաւ։ Բայց իր կազմուածքին բնական զօրութեամբ յաղթեց հիւանդութեան, եւ անկէ վրան մնաց միայն տարօրինակ մելամաղձութիւն մը,

(Շարունակելի)

անոնք որ, թերի դաստիարակութեան մը տանջանքներով անգիտակցորէն մեղանչեցին ժամանակի արդար պահանջքի և իրենց ազգային անարատ ոգւոյ ուղղութեան դէմ, իբրեւ բարոյազուրկ ու մերկ մարդկային կատարելութեան շնորհներէն, տակաւ առ տակաւ թուլանալով։ Ոչնչութեան կամ նուաստութեան ենթակայ եղան։ Այս մասին փաստեր ու օրինակներ չեն որ մեզ կը պակսին, բայց, քանի որ, մեր յարգելի ուսուցիչները, ազգերու անցեալ ու ներկայ պատմութիւնները իմաստասիրած են, իհարկէ, այս մասին համամիտ կըլլան ինծի։

Հիմայ խօսքերնիս մասնաւորելով, մեր ազգի մասին, մենք ամենքս ալ գիտենք որ, մեր քաղաքական ուժի և իշխանութեան սպառելէն ու անկումէն յետոյ, մեր գոյութեան ամենազօրեղ սատարն ու միջոցը, դպրոցն ու եկեղեցին եղած են։ Մեր ազգային կեանքի այս զոյգ կարեւոր գործօնները իրարու լրացուցիչներն են։ «Փոչունը և իր 2 թեւերը»։ Այս մասին ալ՝ դրական օրինակները՝ ներկայ զօրաւոր ազգաց կեանքի մէջ շուտ պիտի գտնենք, եթէ քիչ մը խոհականօրէն աչքի առնենք բերենք երեւոյթներն իրենց ներքին պատճառներով։

Ու քանի որ մեր յարգելի ուսուցիչներու մէջ ազնիւ իղձ մը կը նկատեմ, իրենց ընդհ. միութեան հարցին շուրջը՝ և որպէսզի գործը լաւ հիման վրայ դրուի, «Միութեան» կանոնագիրն ալ՝ պատրաստելու փութկոտութիւնը կը նշմարուի, փափաքելի է որ, կիթական ժբաջան մշակներու նիւթական բարեւաւութեան զուգընթաց բարոյական տեսակէտն ա՛լ անվրէպ նկատողութեան առնել։

Շատ անգամ տեսած ու լսած ենք, մեր ուսուցիչները (բացառութիւնք յարգելով) որոնք իրենց ռսճիկները մեր Ազգ. եկեղեցւոյ ժողովրդեան սանդիմներով կը գանձեն, այդ երանելիները, իրենք չեմ գիտեր մտքի ի՞նչ տեսակ փիլիսոփայութեամբ, տարամերժօրէն սկէպտիկ ու արհամարհական վերաբերում մը ունեցած են դէպի մեր մաքուր կրօնն և ազգային աւանդական բարոյականը. այսինքն պարտաւորեցնել աշակերտները տարին 2 անգամ Ս. Հաղորդութիւն առնելու և ամէն կիրակի և տօն օրեր եկեղեցի երթալու, բայց իրենք, յարգելի ուսուցիչները, կը չեզոքանան բոլորովին...։

Ա՜հ, եթէ մենք այսօր փորձենք հաւատքը ու բարոյականը մէջտեղէն վերցնել. և դպրոցներու մէջ կրօնքի դասաւանդութեան բնաւ հոգ չի տանինք, արդեօք անոնց պակասը լրացնող ի՞նչ բան պէտք է փնտռել.. որ մեզի նման լքուած ու վայրավատին ազգի մը գոյութիւնը պահելու աստարին և աշխարհաքաղաքացիութեան ամենավտանգաւոր հոսանքի դիմաց զօրեղ թումպա կանգնին...

Դպրոցը մեր ազգային կեանքի և գոյութեան ծիլերը չեռուցնող և զօրացնող կենսատու սուրբ վառարանն է. ամէն բանէ աւելի, անհրաժեշտ է, մաքուր բարոյականի և ազգային անարատ ոգւոյ անխառն զգացման նիւթերով արտացոլացնել պայն. ու քանի որ ատ ամենամեծ ու վսեմ գործը ուսուցչաց ձեռքերուն յանձնուած է, կարծեմ նոյնքան ստիպողական է այդ սուրբ գործին յարմար մշակներու պահանջքը։

Ուսուցիչը՝ կեանքի մէջ ամենակենդանի և իսկատիպ օրանակն է մատաղ ուսանողներու որ, վաղուան սերունդը պիտի կազմեն։ Հին ասիացիները, այնքան վստահութիւն և համարում ունէին իրենց ժամանակի հռետոր ուսուցչաց բարոյականին, որ անոնց վկայութիւնը, առանց երդումի կընդունուէր ամենամեծ դատարաններու առջեւ։ Եթէ՝ մեր յարգելի ուսուցիչները, նիւթականէն աւելի բարոյականի տեսակէտով կը բաղձան ըմբռնել իրենց վրայ ծանրացող պաշտօնի պարտականութիւնը, հաւատի եմ որ, իմ այս անկեղծ նկատողութիւնն աննկատ չի մնար. ու իրենց «Միութեան» համար գծելիք կանոնագրի մէջ ազգային ոգւոյ և բարոյականի դէմ, սոփեստօրէն մեղանչող՝ իրենց ողորմելի պաշտօնակիցներու նկատմամբ, ամենաարժան պատիժը կանխատեսելու խելացութիւնը կունենան։

Ուրեմն, փափաքելով բոլոր հոգւով մեր ազգային բարոյական եռանդուն և ազնիւ մշակներու յարատեւ և արդիւնաւոր «Միութեան» իրագործման։ (*)

Մնամ սրտանուէր ազօթարար
ՍՍՐԴԻՍ ՔՀՆԵ ՂՍՐԻՊԵԱՆ

14 Մայիս 1906
Սիլիստրէ

(*) Տէր հայր, ձեր սոյն գրութիւնը կը հրատարակենք լոկ իբր նմոյշ մը մեր ամենէն բարինախանձ կրօնականներու իսկ մտածելակերպին, միեւնոյն ատեն առիթ մը ընծայելու համար հայ ուսուցիչներուն՝ որպէս զի հրապարակու ապացուցանեն թէ իրենք հեռու են ձեր յայտնած նախապաշարումները սնուցանելէ։ Արժանապատիւ հայր, ներկայ դարուն մէջ ձեր յիշած տարրերէն ոչ մին ազգութեան մը անհրաժեշտ պայմանները չեն քաղաքականապէս. Ամերիկեան մէկ ազգ միայն կայ, թէեւ զայն կազմող տարրերը ոչ կը բրօնքով, ոչ լեզուով եւ ոչ ազգային ուրոյն բարոյականով իրարու նման են. նոյնը նաեւ Զուիցերիոյ համար. Մենք ուսուցիչներէն կը պահանջենք ոչ նախապաշարեալ, այլ իրական ազգային դաստիարակութիւն տալ սերունդներուն, իսկ ատոր համար ոչ Զատկին հաղորդութիւը կարեւորութիւն ունի, ոչ կիրակի օրը եկեղեցի երթալը։ Տէր հայր, ձեր եկեղեցիին ամենէն աւելի նախանձախնդիրը անոր անունը չահագործող խաբեբաներու ամենէն աւելի թշնամին, անոր հովանիին տակ ամէն ստորնութիւն գործող սքեմաւորներու թաղականներու եւայլներու դէմ ամենակատաղի կռուողը միշտ անոնք եղած են ու են, որոնք տարին անգամ մը եկեղեցի չեն երթար գուցէ եւ 20 տարի ալ հաղորդութիւն չեն առած։ Այնպէս չէ՞, Եթէ գործերնիս ձեր միամիտ կիրակնօրեայ հաւատացեալներուն մեջ, վա՜յ էր եկած մեր ազգին գլխուն։

Զի յուսահատիք, տէր հայր, կրօնքի ստրկացուցիչ բարոյականէն շատ աւելի վեհ բարոյական մը կայ այսօր մեր վարժարաններուն մէջ կրնայ անոր տեղը բռնել եւ պէտք է բռնէ. կրօնքի գործած աւերները բուժելու համար։ Կերեւայ թէ, դուք ազգերու պատմութիւնը պէտք եղած ուշադրութեամբ չէք ուսումնասիրած, եւ կամ, ձեզի յատուկ ըմբռնում մը ունիք մարդկութեան յեղաշրջումները բացատրելու։ Ամէն պարագայի մէջ, մի՛ մոռնաք որ կրօնքը այլեւս դադրած է քաղաքակիրթ ազգի մը համար, բարոյական ազդակ ըլլալ։

Եւ սակայն, ձեր անկեղծութիւնը երբէք խնդրոյ նիւթ չենք ուզեր ընել։

Ծ. Խ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Լուր կը շրջի թէ՝ թրքա—ռուսական սահմանագծի վրայ, Տակիր անուն գիւղի մօտ թուրք և ռուս սահմանապահ զինուորներու միջեւ ընդհարում մը տեղի ունեցեր էր և սահմանապահ զինուոր մը մռռած է։

—«Բոլիթիշէ գորէսբոնտէնցա» լրագրի համաձայն, թուրք ու Զերնակորա սահմանագծին վրայ եղած խռովութիւնները վերջացած են, սակայն Թուրքիան իր պահեստի զինուորները Դոսովայի նահանգը կը խրկէ, տեղւոյն պահակազօրը զօրացնելու նպատակով։

ՌՈՒՍԻԱ

Ցարը երկրագործական յանձնախմբի առաջադրագիրը հաստատած է, որուն համաձայն գիւղացիներուն 4 միլիոն հարիւրհազարամեդր հերկելի հող և 2 ու կէս միլիոն արօտատեղի բաշխուելու է։

—Ռուսիոյ քանի մը նահանգներուն մէջ սովը մեծ ծաւալ կըստանայ։ Զէմստվոներու շատ փափուկ գրութիւնը՝ սովեալներու օգնութեան հասնելու ամէն միջոցէ զիրենք կը զրկէ։ Սովը Տումայի մէջ օրակարգի անցած է։

Ներքին գործոց նախարարութենէ, հապարաւոր խնդրանքներով նպաստ կը պահանջեն։

—Բէդերսպուրկէն կիմացնեն թէ «Կաղէդա» լրագիրը կը հրապարակէ թէ՝ Տուման ցրուելու համար հարկ եղած հրովարտակը նախարարապետ Կորէմիկին գրպանին մէջ է արդէն, սակայն ատի գործադրելու համար պէտք եղած քաջութիւնը կը պակսի։

—«Փսանեբորգ Դարա» անուն լրագիրը կիմացնէ թէ Տուման, Սամարայի նահանգի գիւղացիներէն հեռագիր մը ստացեր է հետեւեալ պարունակութեամբ։ «Մենք Սամարսքա նահանգի, Փոքրովսքա Սլոպոտայի գիւղացիներս, թուով 1416 հոգի, սրտի անհուն կսկիծով իմացանք կառավարութեան Տումայի տուած պատասխանը, որմէ ակնյայտնի կերեւի թէ՝ Տումայի պահանջները ամբողջովին մերժուած են։ Հասարակութեան հարցին խաղաղապէս վերջանալու համար տաժուած յոյսը կորաւ։ Պահանջեցէք ու պնդեցէք անձամբ Ցարին ներկայանալ։ Զենք կարծեր որ Ցարը իր նախարարներուն ըրած առաջարկութիւնը ընդունելով հայրենիքի կործանման պատճառ ըլլայ։ Խիստ և անխախտ եղէք ձեր պահանջներուն մէջ։

—Տումայի դէմ նիւթուած դաւադրութեան պարագլուխները հետեւեալներն են. Թլէրով, մեծն իշխան Նիքոլա Նիքոլաէվիչ, Բէթերսպուրկի զինուորներու ընդհանուր հրամանատարը, անոր եղբայրը Բէդար Նիքոլաէվիչ և Սարանչէվ զօրավար։

Բիրտ ուժով Տուման ցրուելու համար, դաւադրողները 400 զինուորով Տումայի վրայ յարձակիլ ու միանգամայն բոլոր երեսփոխանները ձերբակալել, անմիջապէս բոլոր Ռուսաստանի մէջ Տիքթաթուրա յայտարարել, Բէթերսպուրկը բաժնել 4 զինուորական բաժնի, և եթէ հարկը պահանջէ Բէթերսպուրկի սալայատակները արիւնով ողողել։ Սակայն Զսեադովսգի անուն զօրավարը կը մերժէ այս դաւադրութեան իր զինուորներովը մասնակցիլ։

—Բոժէսդվէնսքին և անոր սպայակոյտին պատկանող 9 սպաներ, զինուորական ատեանի յանձնուած են դատուելու «Բէտոմիյ» անուն սուզանաւով տնձնատուր ըլլալուն, իսկ Բոժէսդվէնսքին հարկ եղած հրամանը չտալուն համար այդ մասին։

Печатница на П. Глушковъ С-е Вар.